ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔԿԴ-ԳՀԾՁԲ-ԳՏՀ-18/1.1

ք. Երևան «04» 05 2018թ.

ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս դեպարտամենտի ղեկավար Ա.Զալինյանի, որը գործում է դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Մարգարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **որակի տեխնիկական հսկողության ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետները ներկայացված են պայմանագրի N 1 Հավելվածում:

2.4.5 Եթե պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **145000 (մեկ հարյուր քառասունհինգ հազար)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ քննչական կոմիտե	«Բագարանի Բարիք» ՓԲԸ
ՀՀ, Երևան, Մամիկոնյանց 46/5	ք. Երևան, Տիգրան Մեծի 4
ՀՀ ոստիկանության գործառնական վարչություն,	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Կիևյան մ/6
Հ/Հ 900011019776	Հ/Հ 11500498836200
ՀՎՀՀ 02631263	ՀՎՀՀ 02235628
	էլ. հասցեն՝ bagaranibariq@gmail.com
	հեռ. 093 71 32 04
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 04 » « 05 » 2018 թ. կնքված
ՀՀՔԿԴ-ԳՀԾՁԲ-ԳՏՀ-18/1.1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	71351540/3		դրամ	145000	1	ք.Գորիս Նարեկացի N 3	10.11.2018թ

Տեխնիկական բնութագիրը
1. Տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի պատվիրատուի կողմից տրամադրվող նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա և պետք է ապահովի վերանորոգման աշխատանքների իրականացումը անհրաժեշտ որակով և ինժեներական նախագծերին, տեխնիկական առանձնահատկություններին և այլ պայմանագրային փաստաթղթերին համապատասխան: 2. Տեխնիկական հսկողության ծառայությունները պետք է իրականացվեն Պատվիրատուի կողմից տրամադրվող պարտականությունների շրջանակներում: 3. Տեխնիկական հսկողություն իրականացնողի հիմնական պարտականություններն են ՝ • շինարարության սկզբից մինչև ավարտը ընկած ժամանակահատվածում պարբերաբար լուսանկարահանել շինարարության օբյեկտի վիճակը, • ապահովել կատարվող աշխատանքների համապատասխանությունը վերանորոգման նորմերին և կանոններին • Կապալառուի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման շեղում հայտնաբերելուց անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին՝ կցելով համապատասխան հիմնավորումը, • ստուգել և վերահսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի սպեցիֆիկացիաներում և պայմանագրային մյուս փաստաթղթերին համապատասխանությունը: Արգելել կամ փոփոխել այն նյութերը, որոնք չեն համապատասխանում անհրաժեշտ պայմաններին, • վերահսկել և գնահատել շինաշխատանքների գործընթացը, որպեսզի ապահովվի շինաշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի, • ստուգել բոլոր այն փորձարկումների արդյունքները , որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար: Ստուգել բոլոր հաշվարկները, որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար, • ստուգել բոլոր ծավալային չափերը և հաշվարկները, որոնք անհրաժեշտ են վճարման համար, • կատարել որակի և քանակի հսկումը, այն աշխատանքների անհրաժեշտ փորձարկումները, որոնք կատարվում են կապալի պայմանագրի իրականացման շրջանակում, • գտնել շինարարության ժամանակ առաջացող խնդիրները և առաջարկել այն գործողությունները, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքները արագացնելու և աշխատանքային ժամանակացույցը պահպանելու համար, • հսկել բոլոր այն հարցերը, որոնք կապված են շինաշխատանքներն անվտանգ իրականացնելու հետ և հրահանգել Կապալառուին տեղադրել նշաններ, լուսավորության անվտանգության սարքերի և այլ համապատասխան միջոցառումների իրականացման համար, • կատարել անհրաժեշտ գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի վերահսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր),

- կատարել աշխատանքների ծավալների չափագրումներ և մասնակցել կատարողական փաստաթղթերի կազմմանը և հաստատմանը,
- շինարարության ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնել Հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ՝ կցելով լուսանկարները, անհրաժեշտ գծագրերը, ծածկված աշխատանքների ակտերը, փորձարկման ակտերը, սերտիֆիկատները:
- Շինարարության ողջ ընթացքում ապահովել տեխ. հսկիչի մշտական ներկայությունը օբյեկտում:

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային վարչության Գորիս քաղաքի Նարեկացի N 3 շենքում գտնվող մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների

N	հիմնա վորում	Աշխատանքների անվանումը	չափ. միա վոր	քանակ
1	2	3	4	5
		1. Քանդման աշխատանքներ		
1	E46-124	Փայտյա դռների ապամոնտաժում	քմ	20,800
2	E46-122	Փայտյա պատուհանների ապամոնտաժում	քմ	29,300
3	E6-163	Բետոնյա պատերի քանդում	խմ	11,800
4	E46-103	Մանրահատակի քանդում	քմ	137,600
5	E46-99	բետոնյա հատակի քանդում	խմ	1,100
6	E46-101	Ցեմենտյա հարթեցնող շերտի քանդում	քմ	165,880
7	E13-5	սան-հանգույցի խեցե սալերի քանդում	քմ	43,740
8	E8-224	Գաջե սվաղի քանդում պատերից և առաստաղից	քմ	390,000
9	C310-5 K=1,2 տ.մ.կ 29	Շին, աղբի հավաքում, բարձում և տեղափոխում 5կմ	տն	38,200
		Ընդամենը		
		1. Միջնապատեր		
1	E8-169	Միջնապատերի կառուցում թեթև բետոնե բլոկներից 10սմ հաստ.	քմ	76,200
2	E8-141	Միջնապատերի կառուցում թեթև բետոնե բլոկներից 20սմ հաստ.	խմ	5,200
3	E8-59	Միջնապատերի ամրանավորում Φ6 ամրան	տն	0,150
4	E6-170	Միաձույլ ե/բետոնե բարավորի պատրաստում B12,5 դասի բետոնից	մ^3	0,900
5	Շուկա	Φ12- AIII դասի ամրանի արժեքը	տն	0,020

6	Շուկա	Φ8 AI դասի ամրանի արժեքը	տն	0,018
		Ընդամենը		
		1. Դռներ և պատուհաններ		
1	շուկա	Արտաքին ալյումինե խուլ դռան տեղադրում /ներառյալ սարքերը, կողպեքը /	քմ	3,760
2	շուկա	Ներքին մետաղապլաստե խուլ դռների տեղադրում /ներառյալ սարքերը, կողպեքը /	քմ	5,300
3	շուկա	Ներքին ՄԴՖ խուլ դռների տեղադրում /ներառյալ սարքերը, կողպեքը /	քմ	17,010
4	շուկա	Մետաղապլաստե երկշերտ ապակեպատ լուսամուտների տեղադրում /ներառյալ սարքերը, ապակեփաթեթը /, բացվող	քմ	16,420
5	շուկա	Մետաղապլաստե երկշերտ ապակեպատ լուսամուտների տեղադրում /ներառյալ սարքերը, ապակեփաթեթը /, չբացվող	քմ	16,660
6	շուկա	Պլաստմասե լուսամուտագոգերի տեղադրում , 40սմ լայնությամբ	քմ	24,200
		Ընդամենը		
		Հատակներ		
1	E11-55 E11-55 K=6	ցեմենտ-ավազային նախաշերտի պատրաստում 50մմ հաստ.	քմ	165,900
2	E11-14	Զրամեկուսացում մեկ շերտ իզոգամով /սան-հանգույց /	քմ	11,040
3	E11-221-2	Հատակների կառուցում պրեսգրանիտե սալերից	քմ	43,640
4	E15-77	Նույնը չսահող պրեսգրանիտե սալերից, աստիճանների և հարթակների համար	քմ	32,400
5	E11-135	Խեցեսալե հատակների կառուցում	քմ	11,040
6	E11-197	Լամինաթե հատակների պատրաստում, սպունգի վրա	քմ	121,600
7	E11-252	Պրեսգրանիտե շրիշակների տեղադրում h= 100մմ	քմ	10,200
		Ընդամենը		
		Հարդարման աշխատանքներ		
1	E15-246	Պատերի սվաղում գաջե շաղախով բարելավված որակի /այդ թվում սանդղաբազրիքի կողերի/	քմ	757,200
2	E15-247	առաստաղի սվաղում գաջե շաղախով բարելավված որակի	քմ	201,900

3	E15-660	Պատերի ներկում լատեքսային ներկով	քմ	757,200
4	E15-260	Պատերի սվաղում ցեմենտյա շաղախով հաղճասալի տակ	քմ	44,300
5	E15-82	Պատերի երեսապատում հաղճասալով /2.4մ բարձ./	քմ	44,300
6	E15-661	առաստաղի ներկում ջրաեմուլսիոն ներկով բարելավված որակի	քմ	201,900
7	E7-735	Նիկելապատ սանտղաբազրիքի տեղադրում	գծմ	14,400
8	շուկա	Առաստաղի երեսապատում պլաստմասե շիթերով	քմ	11,040
9	շուկա	Աստիճանավանդակի իրանի երեսապատում գիպսե շիթերով	քմ	36,000
		Ընդամենը		
		Արտաքին հարդարման և բարեկարգման աշխատանքներ		
1	E15-77	Պատուհանագոգերի տեղադրում բազալտե սալերից 3սմ հաստութ.	քմ	3,900
2	E11-97 E11-22	Պատուհանների բացվածքների պատերի հետ հատման ծեղքերի լցափակում ցեմենտ-ավազային շաղախով	քմ	1,600
3	E15-10	Արտաքին պատերի երեսապատում բազալտե սալերով 3սմ հաստու.	քմ	2,250
4	E27-20	Բազալտե եզրաքարի նախապատրաստական շերտ կոպճավազից 120մմ հաստությամբ, խտացումով	մ³	0,640
5	E27-87	10x20սմ բազլտե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքի վրա	գմ	26,000
6	E27-20	Սրբատաշ բազալտե սալերի նախապատրաստական շերտ կոպճավազից, խտացումով	մ³	5,900
7	E6-1	Սրբատաշ բազալտե սալերի հիմքի կառուցում B 15 դասի բետոնից 100մմ հաստությամբ	մ³	4,400
8	E11-221	40մմ հաստությամբ սրբատաշ բազալտե սալերի շարվածք	մ²	43,500
9	E1-961	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով կողլիցք	մ³	5,600
10	E11-6	Խճի շերտի պատրաստում	մ³	0,800
11	E6-21	Արգելապատերի խամքարաբետոնե ժապավենային հիմքերի պատրաստում B12,5 դասի բետոնից	մ³	3,500

12	E6-90	Արգելապատերի բետոնյա իրանի պատրաստում B15 դասի բետոնից	մ^3	1,900
13	E15-1	Պատերի երեսապատում 30մմ հաստ.բազալտե սալերով	մ^2	13,000
14	E6-90	Տումբաների բետոնյա իրանի պատրաստում B12,5 դասի բետոնից	մ^3	1,100
15	E15-1	Տումբաների երեսապատում 30մմ հաստ.բազալտե սալերով	մ^2	7,600
16	E15-70	Բազալտե եզրադիրների տեղադրում	մ^2	6,500
18	E9-122	Մետաղական ճաղաշարերի տեղադրում 7հատ	տն	0,180
19	E6-83	Ներդիր էլեմենտների տեղադրում	տն	0,012
20	E15-614	Մետաղական ցանկապատերի յուղաներկում 2 անգամ	մ^2	15,400
21	E22-117	Φ50մմ ՊՎՔ խողովակների տեղադրում	մ	6,300
22	E1-968	Հողի հետլիցք ձեռքով տեղի բնահողով	մ^3	6,600
23	E23-1	Ավազի շերտի պատրաստում 10սմ հաստ.	մ^3	6,400
28	E6-21	Արտաքին աստիճանների խամքարաբետոնե հիմնակմախքի կառուցում բետոնից Բ 1.25 /պատկերասրահի 2-րդ մուտք /	խմ	3,400
29	E15-77	Արտաքին աստիճանների երեսապատում բազալտե սալերով 3սմ հաստությամբ / պատկերասրահ /	քմ	7,470
30	E6-21	Խամքարաբետոնե հիմքերի պատրաստում B10դասի բետոնից	մ^3	1,900
31	E6-109	Միաձույլ ե/բետոնե սյուների պատրաստում B20 դասի բետոնից	մ^3	2,560
32	Շուկա	Φ16- AIII դասի ամրանի արժեքը	տն	0,410
33	Շուկա	Φ8 AI դասի ամրանի արժեքը	տն	0,220
34	E6-90	Խարամաբետոնե պատերի պատրաստում B10դասի բետոնից	մ^3	2,400
35	E15-1	Երեսապատում40մմ հաստ.բազալտե սալերով	մ^2	12,400
36	E15-70	Բազալտե գլխաթասերի տեղադրում 70մմ հաստ.	մ^2	3,400
37	E6-169	Միաձույլ ե/բետոնե ծածկի գոտու պատրաստում B20 դասի բետոնից	մ^3	0,560
38	Շուկա	Φ16- AIII դասի ամրանի արժեքը	տն	0,070

39	Շուկա	Φ8 AI դասի ամրանի արժեքը	տն	0,044
40	E6-173	Միաձույլ ե/բետոնե ծածկի սալի պատրաստում B20 դասի բետոնից	$մ^3$	1,220
41	Շուկա	Φ6Ac 1 ամրանի արժեքը	տն	0,082
42	E10-70	Նոր փայտե կոնստրուկցիաների կառուցում	$մ^3$	0,270
43	E12-404	Տանիքի ծածկույթի կառուցում գունավոր պրոֆիլավոր ցինկապատ թիթեղից 0,50մմ հաստ. կավարամածով	$մ^2$	9,620
		Ընդամենը		
		Ջրամատակարարում		
1	E16-261	Խողովակաշարի անցկացում մետաղապլաստե խողովակներից Φ 20/15մմ	գծմ	8,000
2	E16-261	Խողովակաշարի անցկացում մետաղապլաստե խողովակներից Φ 16/112մմ	գծմ	14,100
3	E18-811-1	Փական Φ 20մմ	հատ	2,000
4	E18-811-1	Փական Φ 15մմ	հատ	5,000
5	շուկա	Ֆիտինգներ	հատ	8,000
6	E12-811-1	Ջրի թողարկիչ ծորակներ Φ 15մմ	հատ	3,000
7	E16-219	Խողովակաշարի հիդրավլիկ փորձարկում	գծմ	22,100
8	E46-50	Անցքերի բացում պատերում	հատ	4,000
9	E46-53	Անցքերի բացում ծածկերում	հատ	1,000
10	E46-74	Անցքերի լցափակում	խմ	0,010
11	E16-34	Խողովակաշարի անցկացում կոյուղու պլ խողովակներից Φ 100մմ	գծմ	1,200
12	E16-33	Խողովակաշարի անցկացում կոյուղու պլ խողովակներից Φ 50մմ	գծմ	1,800
13	E17-28	Կերամիկական լվացարանի տեղադրում	հատ	3,000
14	E17-61	Կերամիկական զուգարանակոնքի տեղադրում	հատ	4,000
15	E17-36	Հոսակների տեղադրում	հատ	2,000
		Ընդամենը		
		Լուսավորություն		
1	8-573-7	Պլաստմասե տուփ 10 ավտոմատով	հատ	2,000
2	8-402-2	3x2,5մմ հատվածքով հաղորդալարի անցկացում	գծմ	220,000
3	8-402-2	3x4մմ հատվածքով հաղորդալարի անցկացում	գծմ	460,000
4	8-403-19	Հաղորդալար ПВ-0.38-10 $մմ^2$ (3 հաղ. 336 մ)	մ	32,000
5	շուկա	ավտոմատ անջատիչ 16Ա	հատ	5,000

6	շուկա	ավտոմատ անջատիչ 25Ա	հատ	2,000
7	շուկա	ավտոմատ անջատիչ 32Ա	հատ	2,000
8	8-591-7	վարդակների տեղադրում հողանցումով	հատ	44,000
9	8-591-7	երկտեղ վարդակների տեղադրում հողանցումով	հատ	10,000
10	8-591-2	մեկստեղնավոր անջատիչների տեղադրում հողանցումով	հատ	16,000
11	շուկա	տուփ ճյուղավորման պլաստմասե	հատ	15,000
12	շուկա	տուփեր պլաստմասե անջատիչների և վարդակների համար	հատ	70,000
14	8-605-1	Լուսատու լյումինիսցենտային լամպով 2x36վտ	հատ	40,000
15	8-604-1	լուսատու շիկացման լամպով 1x60վտ	հատ	4,000
16	8-604-1	Պատի լուսատու շիկացման լամպով 2x60վտ	հատ	2,000
		Ընդամենը		
		Ջեռուցում		
1	E18-71 K=0,5	Գազի կաթսայի տեղադրումQ=35կվտ	հատ	1,000
2	E18-112	Ջեռուցման ալյումինե մարտկոցների տեղադրում	էքմ	18,600
3	շուկա	Ջեռուցման ալյումինե մարտկոցների արժեքը	սեկցիա	116,000
4	12-811-1	Դատարկման փական Φ20մմ	հատ	12,000
5	E18-811-1	Փական Φ40մմ	հատ	2,000
6	E18-811-1	Փական Φ 15մմ	հատ	24,000
7	E18-165	Շրջանառու պոմպերի տեղադրում	հատ	1,000
8	E18-811-1	Ջեռուցիչի փական վերևի Φ 15մմ	հատ	12,000
9	E18-811-1	Ջեռուցիչի փական ներքևի Φ 15մմ	հատ	12,000
10	շուկա	Ջեռուցիչի կախիչ	հատ	24,000
11	շուկա	Ջեռուցիչի խցան	հատ	12,000
12	E16-264	Խողովակաշարի անցկացում մետաղապլաստե խողովակներից Φ 40/5,5մմ	գծմ	24,400
13	E16-263	Խողովակաշարի անցկացում մետաղապլաստե խողովակներից Φ 32/4,4մմ	գծմ	40,000
14	E16-262	Խողովակաշարի անցկացում մետաղապլաստե խողովակներից Φ 25/3,5մմ	գծմ	24,000
15	E16-261	Խողովակաշարի անցկացում մետաղապլաստե խողովակներից Φ 20/2,8մմ	գծմ	46,000
16	E18--179	Բախշիչ սանրիկների տեղադրում երկտեղանոց	հատ	1,000

17	շուկա	Ֆիտինգներ մետաղապլաստե խողովակների համար /տարբեր/	հատ	84,000
18	E16-219	Խողովակաշարի հիդրավլիկ փորձարկում	գծմ	134,400
19	E46-50	Անցքերի բացում պատերում	հատ	17,000
20	E46-74	Անցքերի լցափակում	խմ	0,050

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,
Հ/Հ 900011019776
ՀՎՀՀ 02631263

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Բագարանի Բարիք» ՓԲԸ
ք. Երևան, Տիգրան Մեծի 4
«Հայբիզնեսբանկ»
ՓԲԸ,Կիևյան մ/ճ
Հ/Հ 11500498836200
ՀՎՀՀ 02235628
էլ. հասցեն՝
bagaranibariq@gmail.com
հեռ. 093 71 32 04

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
« 04 » « 05 » 2018 թ. կնքված
ՀՀՔԿԴ-ԳՀԾՁԲ-ԳՏՀ-18/1.1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71351540/3	Տեխնիկական հսկողության ծառայություններ					145000	145000	145000	145000	145000	145000	145000	145000	**145000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,
Հ/Հ 900011019776
ՀՎՀՀ 02631263

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Բագարանի Բարիք» ՓԲԸ
ք. Երևան, Տիգրան Մեծի 4
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ,Կիևյան մ/ճ
Հ/Հ 11500498836200
ՀՎՀՀ 02235628
էլ. հասցեն՝
bagaranibariq@gmail.com
հեռ. 093 71 32 04

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
« 04 » « 05 » 2018 թ. կնքված
ՀՀՔԿԴ-ԳՀԾՁԲ-ԳՏՀ-18/1.1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«04» «05» 2018 թ. կնքված
ՀՀՔԿԴ-ԳՀԾՁԲ-ԳՏՀ-18/1.1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն